

և տեսեալ՝ի վերսոյ օդոյն ցիր և ցան՝ ըղ-
շափ աւուրն երկուտասան ժամն, և յե-
րեկոյին զնդեալ ժողովեալ կցաւ յար-
փին վերին, ուստի խղաւ առաւօտն։
Եւ եղեւ երեկոյ սպառուած աւուրն։ և
վաղորդեան աւարտ գիշերոյն, ընդ տիւ-
և ընդ զիշերն օր մի, իդէ ժամ։ Եւ այդ
սովորութիւն էառ կոչել օր և զերկուսն.
որպէս Դաւիթ ասէ թէ, Յօր աւուրբղիսէ
զբան, և թէ Աւուրբ իմ որպէս հովանի
անցին։ Երբայցիք և Ասորիք հետ բա-
նիս ասելոյ թէ եղեւ երեկոյ, զերիկոյն
դնեն սկիզբն աւուրն։ և անդէպ է 'ի
խաւարէ սկսանել աւուրն, այլ պարտ
է 'ի լուսոյն սկսանել։ Եւ թէ ընդէր ոչ
ասաց օր առաջին՝ որ առաւել՝ 'ի ճահ
էր անկանել՝ 'ի թիւ երկրորդին և այ-
լոցն։ — և այս վասն բազում պատճա-
ռաց . Նախ զի մի է ընութիւն աւուրցն՝
որ շրջապատէ զշարաթ՝ զամիս և զուա-
րի, ծագմամբ արեգականն։ Երկրորդ,
զանցաւորութիւն կենցաղոյս յայտ առ-
նէ, ըստ որումն ասէ, թէ հազար ամ
յաշս Ցեառն որպէս օր երեկի զի էանց։
Երրորդ, զի զատեաց և մեկնեաց զմեծ
օր կիրակէին յայլոց աւուրցն, և կիրա-
կի ասի օրն առաջին։ Զի Աստուած՝ 'ի
կիրակէ էարկ զկամս իւր արարչական
զօրութեամբն։ Զորբորդ, զի նշանա-
կեաց զօրն վերջին՝ զաներեկն, որ նա
է օրն առաջին, զուգակից և հաւասար
լուսոյն՝ որ եղեւ՝ 'ի նմա. զի օրն լոյս
ասի։ Հինդերորդ, զի օրն սուրբ է և
պահպանութիւն օրինացն Աստուծոյ։
Վեցերորդ՝ զի պատուիչ է յարութեան
Քրիստոսի յամենայն դարս, մինչեւ լու-
սանայ յետինն և մինն աներեկ և ան-
փոխանորդ։

Դարձեալ և այս ևս գիտելի է, զի
օրս այս առաջին յորում գոյացաւ լոյն
եղական, ցուցանէ զօր ծննդեան Քրիս-
տոսի, և զօր աւետեաց առաջիկայ տար-
ւոյն։ Զի յորում աւուր լոյն եղական
գոյացաւ՝ 'ի նոյն պատկեր աւուր և
լոյն անեղական՝ 'ի մարմնի ծրաբեցաւ.
և ծննդեամբ՝ 'ի սուրբ կուսէն յերկրի
ծագեցաւ՝ և 'ի նոյն օր մկրտութեամբն՝
'ի Յորդանան Աստուած յայտնեցաւ։

Եւ դարձեալ գիտելի է, զի օրն առա-
ջին կիրակի էր. և օր աւետեաց սուրբ
Աստուածածնին յոմանց կիրակի ասա-
ցաւ. թէպէտ և մեք զշորեքշաբաթն
գիտեմք։ Եւ օր մկրտութեանն Քրիստո-
սի կիրակի էր. այլ և օր այլակերպու-
թեանն Քրիստոսի կիրակի էր, և օր
գալստեանն կիրակի, և օր յարութեանն
կիրակի. և օր միւսանգամ գալստեանն
Քրիստոսի՝ կիրակի։ Յօր ագասութեանն
Խրայէլի՝ 'ի Փարաւոնէ կիրակի, յոր-
ժամ՝ ի ծովու անցին. և օր արւշութեանն
օրինացն Աստուծոյ կիրակի, որ է օր
պենտակոսաէի, Հոգույն սրբոյ դալու-
տեանն։ Եւ կիրակին է օր պատուելի։
վասն այսր ամենայնի՝ է սկիզբն աշ-
խարհի՝ կատարած վերջի օրս այս տէ-
րունի։ Սա է օր կրկնի՝ և բազմապատկի
յայսմ յաւիտենի. 'ի վասու Քրիստոսի
Աստուծոյ մերոյ։

ԲՐԻՄ ՍՊԱՆԻԱՅԻ ԶՈՐԱՎԱՐԻ

Գնացեալ տարին իւր անհամար ա-
րիւնըուշ մեծ զոհից հետ մէկտեղ,
վերջնթեր օրն ալ մեծագոյն զոհ մ'ու-
նեցաւ, որ է Ապանիոյ Բրիմ զօրավա-
րը, որուն մահուան լուրը հասուցին
հեռագիրք ընդ բոլոր աշխարհ, ոչ թէ
պատերազմի գաշտին վրայ հայրենեաց
պաշտպանութեան համար թշնամեաց
զէմ կոռւելով, այլ իւր հայրենակից
գաւակցաց գնտակներուն տակն ընկ-
նալով։

Ծնաւ Բրիմ զօրավարը յամին 1811
Գաղալոնիոյ Ռէւս քաղաքը, և 1833
թուին իզապելլա թագուհւոյն գահա-
կալութեան պատճառաւ տեղի ունե-
ցած քաղաքական պատերազմին մէջ
իրեւ սպայ առաջին անգամ զէնք ա-
ռաւ. խնամակալ թագաւորամօր Մա-
րիամ Քրիստինա թագուհւոյն ներմ
կողմնակից հանդիսանալով, 1837 էն հա-
զարապետ (Colonel) անուանեցաւ. թա-
գաւորամայր խնամակալին փախստե-
նէն ետքը յառաջադիմական (Progress-

istē) կողմնակցութեան հետ միացաւ Էսբարդէրոյի գիշտատորութեան դէմ մաքառելու համար . և 1844ի Սարակոսայի խռովութեան մասնակից ըլլալուն համար՝ բանտարկելութեան վճիռ ելաւ իրեն դէմ . բայց Գաղղիա փախչելով , Մարիամ Քրիստինայի քով վերանորոգութեան (Restauration) զարման պատրաստելու ձեռք զարկաւ . 1843ին ազգային ժողովոյն նուիրակ ընտրուելով՝ Սպանիա դարձաւ , և Քրիստինեանց և յառաջադիմականաց հետ Էսբարդէրոյի դէմ զաշն մը կազմեց : Ոտք հանեց Ռէսի իւր ծննդեան քաղաքը , բայց Զուրպանո զօրավարէն քշուելով՝ Պարցհէլնա գնաց և խռովութիւնը հոն ալ տարածեց : Էսբարդէրոյի անկմամբը և Մարիամ Քրիստինայի յաղթութեամբը , Ռէսի կոմսութեան պատիւը ընդունեցաւ և Մատրիտի քաղաքապետ անուանեցաւ :

Չափաւորականաց և ռամկապետականաց մէջ եղած դաշնակյութիւնը լուծուելով , Պարցհէլնա խռովութիւնը նորէն արծարծեցաւ 'ի նպաստ ազատական սկզբանց . և կը յուսացուէր որ Քրիմիւրժողովրդասէրբնաւորութեամբը կարենայ խաղաղել երկիրը . բայց ստիպուեցաւ զէնք գործածել , և տարի մի ամբողջ ոտն առ ոտն պատերազմեցաւ իր Ամէղլէր զինուորակցին դէմ :

Իբրև մատնիչ ժողովրդեան ամբաստանուելով , թագուհւոյն առաջին համարումը կորաբնցուց , որ արդէն Քրիմի աղատական սկզբունքը մոռցած չէր . ձեռքակալ եղաւ և դատապարտուեցաւ իբրև տէրութեան դէմ դաւաճան և Նարվաէզ իշխանն սպաննելու փորձ փորձող : Այս յետին ամբաստանութենէն քաջութեամբ արդարացուց ինք զինքը ատենից մէջ , բայց առաջնոյն համար պարտաւորուելով վեց տարուան բանտարգելութեան դատապարտեցաւ : Մօրը աղաչանօքը վեց ամսէ ետքը աղատելով , ինը տարի Սպանիոյ քաղաքական գործերը թողուց , և 1853ին Տաճկաստան գնաց Ռուսիոյ դէմ պատերազմին մասնակից ըլլալու , և Դա-

նուրի վրայ Տաճկաց ունեցած յաջողութիւնները Բրիմի ձեռնտուութեանը կ'ընծայեն : 1854ին խռովութեանէն ետքը նորէն Սպանիա կանչուելով , որովհետեւ ազգային ժողովոյն նուիրակ ընտրուերէր , միշտ միապետութեան նպաստաւոր քուէ տուաւ :

Բրիմ՝ յամին 1864 սպանիական բանակին ընդհանուր հրամանատար անուանեցաւ , որ Անդղիոյ հետ՝ Գաղղիացւոցմէ սկսած Մէքսիկոյի արշաւանացը մասնակից պիտի ըլլար : Երրոր Անդղիան առաջին քայլէն ետ քաշուեցաւ այս ձեռնարկութեանէն , սպանիական կառավարութիւնն ալ անոր օրինակին հետեւցաւ , որով Բրիմ վշտացած Մատրիտ դառնալու պարտաւորեցաւ :

Յամին 1866 իվապելլա թագուհւոյն դէմ ծագած ապստամբութեան մէջ մասն ունենալով , Սպանիայէն հեռանալու ստիպուեցաւ . և ամենուն համակրութիւնը 'ի նպաստ իւր սկզբանցը ձգելու համար Եւրոպա ճամբորդութեան ելաւ . բայց մասնաւորապէս Բարիզ և Լոնտրա կեցաւ , ուր ճոխ և բաղմածախ կեանք մը վարեց ունեցած շատ հարստութեամբը :

Թորէդէ ծովակալէն սկսած Գատիչէի խռովութեանէն քիչ ետքը՝ Իղապելլա թագուհւոյն գահէն ձգող ապստամբութեան ախոյեաններէն առաջինն ինքը եղաւ :

Թագուհւոյն փախստենէն ինչուան այս օրս՝ այս երկար ժամանակուանս մէջ , Բրիմ՝ Մատրիտի կառավարութեան գլուխ անցաւ Սերրանո մարածախտին հետ : Իբրև փառասէր՝ ամբաստանուեցաւ թէ թագաւորական թագը իր զլուխը կ'ուղէր զնել , և ըսուեցաւ ալ թէ այլ և այլ իշխանաւորաց կը նպաստէ որ այն թագը իրենց զլուխը կապեն . փոխանակ որ ինքը միշտ փափք ցուցուց որ իտալացի իշխան մը նստի այն դատարկ գահը : Եւ ահա հազիւթէ կատարուեր էր սրտին փափաքը , վատ դաւաճանի մը անողորմ ձեռ-

Քը մարեց անոր կենաց լցուը։ Բայց
Բրիմի անունը պատմութեան մէջ իր
էջը պիտի դրաւէ, և որ պիտի դատէ
արդարութեամբ անոր գործերը։

Մ. ԱՍՏԻՂԻՈՍ ՀՈԵԳՈՒՂՈՍ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

(Տես երես 39.)

Հ Ա Ն Դ Է Ս Պ .

ՏԵՍԻԼ Ա

ՀՈԵԳՈՒՂՈՍ ԵՒ ՊՈՊՂԻՈՍ

ՀՌ. Ա՞ստ ես դու, Պոպղիէ. գործ հասեալ փա-
ռաց Հովմայ, և իմոյ պատուոյս, և հասարա-
կաց խաղաղութեան, և դու չելանես յատեան
ծերակուտին։

ՊՈՊ. Սակայն չե են գումարեալ։

ՀՌ. Ե՛թ, մի յաղաղեր. քաջութեամբ զիսոր-
հուրդս իմ տարցիս 'ի դշուիս յատենի աւագան-
ոյն. և ցուցցես զանձն քո արժանի զարմիդ։

ՊՈՊ. Խոկ զիարդ. հրաման տաս ինձ չարիս քեզ
նիւթել։

ՀՌ. Ինչ որ միանգամ օգուտ բերէ Հովմայ՝ ինձ
անտի զեան և ոչ մի։

ՊՈՊ. Ողորմեա տէր, ինայեա յանձն քո։

ՀՌ. Համարիցին, Պոպղիէ, եթէ մոլիցիմ ինչ.
համարիցին եթէ ես միայն 'ի կենդանիս ատելի
անձին. վաշ խարեւութեանդ. նմանապէս այլոց
և ես ինքն զբարին ողջունեմ և մերժիմ 'ի չա-
րէն. այլ զաս 'ի մեզն և զնա յառաքինութեան
միայն դասնեմ։ Մեծապէս մեզ է վեասու հայ-
րենեաց՝ անձին ազատութիւն հայթայթէլ. ա-
պա չար ինձ կետնը և տղատութիւն։ Առաքի-
նութիւն՝ արեամբ չափ պաշտպանել է բաղդին
հայրենեաց. ապա բարի ինձ մահ և գերութիւն։

ՊՈՊ. Սակայն հայրենիք ոչ են...

ՀՌ. Հայրենիքն համօրէն մի մորմին է՝ որոյ և
մեք եմք մասն. յանցանք են առն քաղաքացայ
հատուածէլ զանձն մեկուսի 'ի նմանէ։ Ծնդ
օգուտ և ընդ վիաս ինքնին արժան է խսրել
նմա. և այս է որ օգաէ կամ վիասէ հայրենեացն՝
առ որ ամենայնի է պարտապան։ Եւ թէ վասն
նորս ինչ ընդ քիրան գոյ և ընդ ապաժոյժ, ոչ
ինչ ետ յանձնէ, այլ զոր 'ի նմանէն ընկալաւ՝
հատոյց։ Ինքն ծնաւ զնա, ինքն դիեցոյց և յա-
ւագոյթ աննդեան տարեալ աճեցոյց։ Օրինօքն
պարսպէ զնովաւ յանիրաւութենէ ընտանեաց,
և զնուուքն՝ յօտարաց։ Փառաց բարձի և պա-
տուոյ արժանի առնէ. պսակէ զվաստակն և
զվաստն պահանջէ զմքէֆ. և իբրու մայր ե-

ղեալ սիրալիր՝ տաժանի երանաւէտ խառնել
խաղաղութիւն յարեն նորա ըստ անխայել մահ-
կանացուացս նախանձոտ բազզի . . . Այսքան
պարզեք՝ ապոքէն կշիռս ունին. և որ ժխտէն
զայդ՝ թող ամփոփեսցէ զնեան իւր, և հիւր մու-
րացիկ զանմարդի մայրիս անտառաց ամոքեացէ
իւր ասպնջական. և անդ յախորժակն ազատու-
թեան քաղցրացին նմոն խշիք և անարդ կա-
զնիք։

ՊՈՊ. Պաշտելի են ինձ բանքդ. գերես զմիտու, այլ
յորդորես ոչ զսիրտ. դիմակալէ բնութիւնն
հնազանդել քեզ։ Որդի եմ, զայն ոչ ունիմ
երբէք մոռանալ։

ՀՌ. Զայդ Հովմայեցին զուր կցեցէ չքմեզանս։
Բրուտոս, Մանղիոս և Վիրդինիոս հարգ էին և
նոքա։

ՊՈՊ. Այս, հայր. այլ գիւցազանց այդ արու-
թիւն 'ի հարս մնաց. ասկաւին ոչ պանծայ
Հովմայ յորդի մի որոյ ինքնին զայր իւր ի իսու-
տանդանս մահու մասնեալ իցէ։

ՀՌ. Ապա աւաջնին գու լիջիր նախանձաւոր այդմ
պարծանաց. երթ . . .

ՊՈՊ. Աղէ հայր . . .

ՀՌ. Մի ևս 'ի քէն ակն ունիմ զիմոյ բազդին
լսել զսահման։

ՊՈՊ. Իժուարինս պահանջես, տէր իմ և հայր,
և առաւել գժուարինս։

ՀՌ. Օտար որ ձանաշես զիս, եթէ հայր։ Եթէ
օտար, մի' առ ինեւ արհամարհէր զօդուա Հովմ-
այ. խոկ եթէ հայր՝ պատկառեալ 'ի հրամանէն
և երթ։

ՊՈՊ. Ա՛հ, եթէ տեսանէիր զծուփս սրտիս՝ սա-
կաւիկ մի ինայէկիր յիս։

ՀՌ. Ես այժմ 'ի սրտէդ արութեան պահանջեմ
փորձ, ոչ սիրոյ։

ՊՈՊ. Եթէ զփորձ ինչ ինդրես զիմ, ով հայր,
ինդրեա զարիւն իմ։ և տստ յոտս քո, հայր
իմ, հեղից բովանդակ։ Այլ զի ձեռն որգւոյդ
միւսցի 'ի բեկումն քո, գիւցազուն հայր, նե-
րեա, չեմ այդմ առաքինութեան բաւական։
(Ետանէ)։

ՀՌ. Մերձենայ ժամն ահաւոր, և խիթամ ես՝
գուցէ արգեօք սասանեսցի ինչ աւագանին։ Ո՛վ
զիք հովանաւորք Հովմայ՝ գուր շնչեցէք իսոր-
հուրդս արժանաւոր 'ի սիրտս նոցա։

ՏԵՍԻԼ Բ

ՄԱՆԼԻՈՍ, ՀՈԵԳՈՒՂՈՍ

ՄԱՆ. Կացցեն այդր նութիրակը 'ի պահ դրանն, և
մի ոք իշնեցէ մտանել 'ի ներլոս։

ՀՌ. (Ժադ խնա)։ Մանղիոս. խոկ առ ինչ գոյցէ։

ՄԱՆ. Ա՛հ, թոյլ առուր ինձ գիւցազունց քաջ-
գիրկս զքէ արկանել։

ՀՌ. Զի՞ գործես. այր հիւպատոս . . .

ՄԱՆ. Ոչ նոյն ինքն եմ այժմ, այլ այր մի պաշ-
տօնաբեր. քում առաքինութեանդ, քոյին արու-
թեանդ, այլ նախանձաւոր քո մեծ՝ որ արդ առ
քեզ գայ պարտութիւն յանձն առնուլ և մե-
զանս՝ ընդ առաջին թշնամութեան առ քեզ ու-
նելոյ. և զքոյդ աղերս բարեկամութեան պա-
տիւ։